



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

### WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ Հ.Յ.Դ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻ ՆԱԽԱԳԱՐ ԱՐՄԷՆ ՌՈՒՍԱՍՏԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Հինգշաբթի, 2 Յունիսի յետմիջօրեին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ եւ Հայաստանի Հանրապետութեան Ազգ. Ժողովի արտաքին յարաբերութիւնների մշտական յանձնաժողովի նախագահ Տիար Արմէն Ռուստամեանի այցելութիւնը, ընկերակցութեամբ Հ.Յ.Դ. Արեւմտեան Միացեալ Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Տիար Աւետիք Իգմիրլեանի: Հանդիպումին ներկայ էին Հոգեշ. Ս. Պարթեւ Կրդ. Կիլիւմեան, Արժ. Ս. Վազգէն Քինյ. Աթմաճեան, Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան եւ փոխ ատենապետ Տիար Ճորճ Զորպաճեան:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց հայրենի հիւրը, որուն առաջին այցելութիւնն էր Ազգային Առաջնորդարան: Տիար Ա. Ռուստամեան, որ հիմնականին մէջ Մայիս 28ին նուիրուած հանդիսութեանց առիթով Լոս Անճելըս կը գտնուի, Առաջնորդ Սրբազանին ու ներկաներուն հետ տեղեկութեանց ու տեսակետներու փոխանակում ունեցաւ Հայաստանի այժմու իրադրութեանց եւ զարգացումներուն մասին: Խորհրդակցութեան նիւթ եղան Հայաստանի քաղաքական կեանքի նորագոյն իրադարձութիւնները, Սփիւռքը յուզող հարցեր եւ առհասարակ հայկական գաղութներու կրած փոփոխութիւններն ու անոնց դիմագրաւած հարցերը:

Յարգելի հիւրը նաեւ առիթ ունեցաւ ծանօթանալու Արեւմտեան մեր Թեմի ընդհանուր պատկերին, Ազգ. Առաջնորդարանի յարկին ու հովանիին տակ տարուող եկեղեցական, քրիստոնեական դաստիարակութեան, երիտասարդական եւ դպրոցական աշխատանքներուն: Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը Տիար Արմէն Ռուստամեանի եւ Աւետիք Իգմիրլեանի նուիրեց յիշատակի նուէրներ:

**PRELATE WELCOMES ARMEN RUSTAMYAN  
REPRESENTATIVE OF THE ARF SUPREME BODY IN ARMENIA**

On Thursday, June 2<sup>nd</sup>, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy Mr. Armen Rustamyan, representative of the ARF Supreme Body in Armenia and Chairman of the National Assembly Standing Committee on Foreign Relations. He was accompanied by ARF Central Committee Chair Mr. Avedik Izmirlian. The Prelate was joined by Very Rev. Fr. Barthev Gulumian, Rev. Fr. Vazken Atmajian, Executive Council Chair Mrs. Rima Boghossian and Vice-Chair Mr. George Chorbajian.

The Prelate welcomed Mr. Rustamyan, who is in Los Angeles on a brief visit to participate in an event celebrating the 93<sup>rd</sup> anniversary of the first Republic of Armenia.

The discussion centered on the state of affairs and current developments in Armenia, as well as issues concerning the Armenian Diaspora and Armenian communities in general.

Mr. Rustamyan was also given a general overview of the Prelacy's endeavors and mission.

At the conclusion of the meeting, the Prelate presented mementos to Mr. Rustamyan and Mr. Izmirlian.